Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանը գտնում է, որ հայցը մերժվելու արդյունքում դատական ծախսը պետք է կրի Հայցվոր կողմը, և հաշվի անելով պետական տուրքի նախապես վճարված լինելը, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

**ՎՃՌԵՑ**

1. Թիվ ԵԴ2/7636/02/23 քաղաքացիական գործով «Բեստշին» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող պատասխանող ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի՝ Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու մասով Դեպարտամենտի 02.05.2023թ. թիվ 5 որոշումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ